Հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական վերահսկողության վարչության վարչական վերահսկողության իրականացման բաժնի փորձագետ Լ.Հովհաննիսյանի կողմից 04.03.2024-04.02.2025 թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Իրականացրել եմ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության մշտադիտարկում:
2. Իրականցարել եմ իրավական հսկողություն մարզպետների ընդունած որոշումների նկատմամբ:
3. Մասնակցել եմ Բաժնին վերապահված բնագավառներին առնչվող հարցերով քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկումների կազմակերպման աշխատանքներին:
4. Ներկայացրել եմ առաջարկություններ Բաժնի պետին իրավական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագրերում չընդգրկված համայնքներում իրականացվող իրավական հսկողությանը գրավոր համաձայնություն տալու վերաբերյալ:
5. Իրականացրել եմ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացվող իրավական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագրերի ուսումնասիրություն և դրանց հաստատման վերաբերյալ ներկայացրել առաջարկություններ Բաժնի պետին:
6. Մասնակցել եմ Բաժնին վերապահված բնագավառներին առնչվող այլ հարցերի քննարկումներին, իրականացրել կազմակերպման աշխատանքներ:
7. Նախապատրաստել եմ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացվող իրավական ակտերի նախագիծ՝ սահմանված կարգով համաձայնեցնելով իրավասու մարմինների հետ:
8. Իրականացրել եմ ՀՀ կառավարության մինչև 2026 թվականը «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնում նախատեսվող՝ մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող 500 մանկապարտեզներ և նախակրթարաններ ծրագրի շրջանակում կառուցվող և 2025 թվականը շինարարական աշխատանքների ավարտ նախատեսող նախադպրոցական ուսումնական

հաստատությունների անհրաժեշտ գույքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, ուսումնասիրություն և դրանց վերաբերյալ շահագրգիռ մարմիններին համապատասխան տեղեկատվության տրամադրում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական վերահսկողության վարչության վարչական վերահսկողության իրականացման բաժնի փորձագետ՝ Լ. Հովհաննիսյան

04.02.2025թ.